ԲԱԹՈՒՄՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՕՐՀՆՎԵՑ ԽԱՉՔԱՐ

Մարտի 28-ին Բաթումում մեծ հանդիսավորությամբ բացվեց Հայաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսություն: Հյուպատոսության գործունեության շրջանակը ընդգրկում է Աջարիայի Ինքնավար Հանրապետության, Գուրիայի, Իմերեթիայի և Փոթի քաղաքի տարածքները: ՀՀ Արտաքին գործերի նախարարի հրամանով գլխավոր հյուպատոս է նշանակվել Հակոբ Հաջի-Հակոբյանը: Նշենք, որ Բաթումում դեռ 1918 թվականից 27 հյուպատոսությունների թվում մինչև 1920 թվականը գործել է Հայաստանի Հանրապետության հյուպատոսություն: Իսկ այսօր բացված նորը երրորդն է Բաթումում Թուրքիայի գլխավոր և Ուկրաինայի ներկայացուցչական հյուպատոսություններից հետո:

Աջարիայի կառավարությունում հանդիպմանը հայկական կողմը ներկայացնում էին Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, նորանշանակ գլխավոր հյուպատոս Հակոբ Հաջի-Հակոբյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը, Աջարիայի հայության և Բաթումի Սուրբ Փրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Կիրակոս աբեղա Դավթյանը, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր, հայ-վրացական տնտեսական ասոցիացիայի համանախագահ Վլադիմիր Բադալյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրթյանը և Բաթումի համայնքի ճանաչված գործիչ Արմեն Գևորգյանը: Վրացական կողմը ներկայացնում էին Աջարիայի կառավարության ղեկավար Լևան Վարշալոմիձեն և կառավարության ղեկավարի առաջին տեղակալ Լևան Անթաձեն:

Ներկայացնելով Հայաստանի գլխավոր հյուպատոս Հակոբ Հաջի-Հակոբյանին՝ ՀՀ դեսպան Հրաչ Սիլվանյանն իր խոսքում մասնավորապես նշեց, որ Գլխավոր հյուպատոսության կազմավորումը ևս մեկ անգամ փաստում է հայ-վրացական փոխհարաբերությունների բարձր մակարդակը և առավել նպաստում, որպեսզի երկու երկրների միջև զարգանան տնտեսական, մշակութային և զբոսաշրջության կապերը: Պարոն Վարշալոմիձեն իր համաձայնությունն ու գոհունակությունն արտահայտեց ասվածի վերաբերյալ և հավաստիացրեց, որ կաջակցի Աջարիայում Հայաստանի Հանրապետության Գլխավոր հյուպատոսության գործունեությանը:

Լևան Վարշալոմիձեն հյուրերին տեղեկացրեց, որ մոտ ժամանակներում Բաթումում կբացվի Աջարիայի ազգային փոքրամասնությունների համար նախատեսված մշակույթի կենտրոն, որը գործունեության լայն հորիզոններ կբացի նաև հայության՝ ազգային-հոգևոր արժեքների, ավանդույթների պահպանման ու ամրապնդման համար:

Հանդիպման ավարտին նորանշանակ հյուպատոս Հակոբ Հաջի-Հակոբյանն Աջարիայի կառավարության ղեկավար Լևան Վարշալոմիձեին հանձնեց հյուպատոսական արտոնագիրը:

Բաթումի քաղաքապետ Ռոբերտ Չխեիձեի հետ հանդիպմանը քննարկվեցին զբոսաշրջության առավել նպաստավոր ճանապարհների ընտրության, եղբայր քաղաքներ՝ Բաթումի և Վանաձորի միջև փոխհարաբերությունների ընդլայնման հարցեր: Թեմի առաջնորդը քաղաքապետից շնորհակալություն հայտնեց՝ Սուրբ Փրկիչ հայկական եկեղեցու բակում խաչքար տեղադրելու և ապագայում տարածքը կանաչապատելու ծրագրի համար:

Մարտի 29-ին հյուպատոսը և պատվիրակության անդամները հանդիպեցին տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Խոսվեց հուզող հիմնախնդիրների և առկա առաջընթացի մասին: Պատվիրակության անդամները կարևորեցին հայ-վրացական տնտեսական կապերը զարգացնելու գործում տեղի համայնքի ցուցաբերած գործուն մասնակցությունը:

Մարտի 30-ին պատվիրակության անդամները Բաթումի Սուրբ Փրկիչ եկեղեցում մասնակցեցին Սուրբ Պատարագին, հընթացս որի առաջնորդ Վազգեն եպիսկոպոսը հավուր պատշաճի քարոզ խոսեց և իր օրհնությունը բաշխեց տեղի հայությանը: Պատարագի ավարտին առաջնորդ Հոր հանդիսապետությամբ եկեղեցու բակում կատարվեց խաչքարի օրհնության կարգ: Արարողությանը ներկա էին բազմաթիվ հայ հավատացյալներ, հյուրեր Երևանից և Թբիլիսիից:

Հանդիսավոր արարողությանը ողջույնի խոսքով հանդես եկան Վրաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Հրաչ Սիլվանյանը, Հայաստանի Ազգային ժողովի պատգամավոր, հայ-վրացական տնտեսական ասոցիացիայի համանախագահ Վլադիմիր Բադալյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Վան Բայբուրթյանը, Բաթումի համայնքի ճանաչված գործիչ Արմեն Գևորգյանը, համայնքի ղեկավար Գրիգորի Վարդանյանը և Բաթումի փոխքաղաքապետ Նաթիա Սուրգուլաձեն:

Միջոցառմանը ներկա էին նաև նորանշանակ գլխավոր հյուպատոս Հակոբ Հաջի-Հակոբյանը, Աջարիայի հայության և Բաթումի Սուրբ Փրկիչ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Կիրակոս աբեղա Դավթյանը, Բաթումի քաղաքապետ Ռոբերտ Չխեիձեն և Աջարիայի կառավարության ղեկավարի առաջին տեղակալ Լևան Անթաձեն: Նշենք, որ խաչքարը նվիրված է տեղի հավատավոր հայությանը, նվիրատուն է Գևորգ Քեհյանը, ճարտարապետը՝ Է. Ֆրանգուլյանը:

Մարտի 30-ի երեկոյան պատվիրակության անդամները վերադարձան Թբիլիսի և Երևան: Հագեցած եռօրյան մեծ ոգևորությամբ անցավ Բաթումում ինչպես հայ, այնպես էլ վրաց հասարակայնության միջավայրում:

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ